**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ Ու Մ Ը**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱ-ՎՈՐՈՒՄ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 10 սեպտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի հուլիսի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 21.08.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցող Ռ. Պապայանի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Վարկային համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. հուլիսի 23-ին:

2. Համաձայնագրի նպատակն է՝ Սկզբնական ծրագրին առնչվող միջոցառումների համար (կենսական նշանակության ավտոճանապարհների ցանցի ընտրված հատվածների բարելավում եւ ավտոճանապարհների կառուցման ոլորտում ժամանակավոր աշխատատեղերի ստեղծում) լրացուցիչ ֆինանսավորում:

3. Համաձայնագիրը բաղկացած է հինգ հոդվածից եւ անբաժանելի մաս կազմող երեք առդիրից եւ հավելվածից, որոնցով սահմանված են Ծրագրի նկարագրությունն ու իրականացման կարգը, մարման ժամանակացույցը եւ սահմանումները:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- վարկի մայր գումարը վերադարձնել մարման ժամանակացույցի համաձայն,
- հայտարարել Ծրագրի նպատակների հանդեպ իր պարտավորվածության մասին, իրականացնել Ծրագիրը տրանսպորտի եւ կապի նախարարության միջոցով՝ փոփոխված Իրականացման ծրագրի, Գործառնական ձեռնարկի դրույթների եւ Ընդհանուր պայմանների դրույթների համաձայն,
- պահպանել ԾԻԳ-ը (Ծրագրերի իրականացման գործակալություն) եւ ՀԱՃՏ-ն (Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն) մինչեւ Ծրագրի ավարտը՝ Բանկի պահանջները բավարարող աշխատակազմով, միջոցներով եւ տեխնիկական առաջադրանքներով,
- ապահովել տարեկան բյուջեից համարժեք միջոցների տրամադրումը ճանապարհաշինական ոլորտին՝ միջպետական եւ հանրապետական ավտոճանապարհների պահպանման աշխատանքների համար,
- Ծրագիրն իրականացնել Հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթների համաձայն,
- իրականացնել Ծրագրի առաջընթացի մոնիտորինգն ու գնահատումը եւ պատրաստել Ծրագրի վերաբերյալ հաշվետվություններ,

- վարել կամ հանձնարարել վարել ֆինանսական կառավարման համակարգ, ինչպես նաեւ պատրաստել եւ յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ օր հետո Բանկ ներկայացնել միջանկյալ աուդիտի չենթարկված Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ:

Համաձայնագրով սահմանված է նաեւ այն գործողության մեջ դնելու եւ դադարեցնելու ընթացակարգերը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2010 թվականի հուլիսի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

10 սեպտեմբերի 2010 թվականի
ՍԴՈ-907